

## Ս. ԼՈՒՍԱՆՈՐԻԶԻ ԹԻՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԵՐԱԹԻՆՈՒԹԵԱՆ ԹՈՒՆԿԱՆՆԵՐԸ

Ս. Լուսաւորչի հաստատութիւնը Ղալաթիոյ մէջ, բաւական հին թուականի մը կը վերանայ եւ կը կանխէ Կ. Պոլսոյ առումը:

Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն Աւագ դրան վրայ գրուած արձանագրութիւնը՝ թէեւ ամփոփ պատմութիւն մ'է արդէն՝ եկեղեցւոյ հաստատութեան ամէնէն գլխաւոր պարագաներուն, բայց ուրիշ յիշատակարաններու հետ բաղդատութեամբ՝ թուականի տարբերութիւն մը երեւան կուգայ, եւ ետքը կ'արժէ որ՝ ինչ ինչ մոռցուած պարագաներ ալ, որ Կոլոտի վերաշինութենէն ետքը տեղի ունեցած են՝ նշանակուին:

Աւագ դրան վրայ գրուած արձանագրութեան համեմատ, Կոմս անունով Քէֆէցի հայ վաճառական մը, Հայոց Թէոդորոս Կաթողիկոսի եւ Երուսաղեմի Եսայի Աւագին պատրիարքի ատեն՝ ճենովացիներէն կը գնէ եկեղեցւոյն հողը եւ շինել կուտայ Եկեղեցին՝ յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի: Այս բոլորին թուական կը գրուի 1436:

Արձանագրութեան մէջ յիշուած Կաթողիկոսն է՝ Թէոդորոս Բ. (Կիլիկիայ). 1377—1392: Իսկ պատրիարքը՝ Եսայի Երչուրք 1390—1393

1 Տես քիչ մը ետքը, «Ս. Լուսաւորիչ արձանագրութիւններն ու յիշատակարանները» գլուխը:

2 Ընդրձկ Օրացոյց 1901 տարւոյ. էջ 390: Բառնարաս Վրդ. Գանձակեցի Յաւրդոս-Բէնի Պարտիրոսոյն Երչուրքի. ասյ. Պոլիս. 1872. էջ 47: